# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2026 թվականի N 0558-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲՈՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՋԱՂԱՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ 5,0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետով , 89-րդ հոդվածի 2-րդ կետով գործող պայմանագրի 6-րդ պարբերության 8.2 կետի պահանջներով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի բնակիչ Բորիկ Մարտիրոսյանի 14.08.2026թվականի դիմումը որոշում եմ.

1.Վարդենիս համայնքի բնակիչ Բորիկ Մարտիրոսյանի Ջաղացաձոր բնակավայրի սեփականություն հանդիսացող 26.07.2010թ. վարձակալությամբ տրված 5,0հա վարելահողի պայմանագիրը վկայական N0148095 լուծել:

2.Վարդենիս համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության և գյուղատնտեսության բաժնին նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե ներկայացնելու համար :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 18
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 օգոստոսի 2026 թվականի N 0559-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ <ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 38 ՀԱՍՑԵԻ 05-005-0073-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,23447 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0540-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2026 թվականի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 38 ՀԱՍՑԵԻ 05-005-0073-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,23447 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0540-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

1.1 Որոշման 1-ին  կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ <<1.Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաք Ե. Չարենցի փողոց, 38 հասցեում  գտնվող <<Վարդենիսի բնակարանային կոմունալ տնտեսություն >> ԲԲԸ-ին պատկանող 05-005-0073-0009 կադաստրային ծածկագրով շենք շինությունները՝ 1960 թվականին կառուցված վարչական շենք՝ 338,3 քմ, պահեստ՝ 29,20 քմ, քանդված շինություններ՝ 188,8քմ և պարիսպ՝ 34,6 քմ շինությունների զբաղեցրած և սպասարկման հողամասի մակերեսը կազմում է 0.23447  հա>>:

1.2 Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ <<2. Վերականգնել ընկերության սեփականության իրավունքը՝ <<Վարդենիսի բնակարանային կոմունալ տնտեսություն >> ԲԲԸ-ի շենք շինությունները՝ 1960 թվականին կառուցված վարչական շենք՝ 338,3 քմ, պահեստ՝ 29,20 քմ, քանդված շինություններ՝ 188,8քմ և պարիսպ՝ 34,6 քմ շինությունների զբաղեցրած և սպասարկման հողամասի մակերեսը կազմում է 0.23447  հա, իսկ Հայաստանի Հանրապետություն պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչության աճուրդի կենտրոնի արդյունքով 34%- ճանաչել Վարդենիս համայնքի սեփականություն>>:

1.3 Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ <<3. Ընկերության կողմից գույքի օտարման դեպքում հողամասի կադաստրային արժեքը ենթակա է վճարման>>:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 19
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 0560

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 1/1 ՀԱՍՑԵԻ 05-043-0004-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2513 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Լուսակունք բնակավայրի 12-րդ փողոց, 1/1 հասցեի 05-043-0004-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի <<այլ հողեր>> 0.2513 հա հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի՝ <<հասարակական կառուցապատման>> գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 20
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 0561-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՄԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-091-0015-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Լենա Զախարյանի դիմումը որոշում եմ.

1.Վարդենիս համայնքի Փամբակ բնակավայրի 3-րդ փողոցի 05-091-0015-0003 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Փամբակ բնակավայր 3-րդ փողոց 4 բնակելի տուն հասցե:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 20
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 0562-Ա

## ԱՆԱՀԻՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-015-0009-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,34314 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<Արտյոմ Ոսկանյան>> ԱՁ-ի կողմից 10.08.2026 թվականին տրված ինքնակամ իրականացված ավտոտնակի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Անահիտ Վոլոդյայի Մանուկյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 8 հասցեի 05-015-0009-0014 կադաստրային ծածկագրով հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակ՝ 62,7 քմ (ներքին մակերես՝ 55,80 քմ), պարիսպ՝ 0,60 քմ մակերեսներով շինությունները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20266TKFWV) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ճանաչել օրինական, որպես՝ Անահիտ Վոլոդյայի Մանուկյանի սեփականություն:

2. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

2.1 Ավտոտնակ՝ 62,7 քմ x 6000 x 0,0631 = 23750 դրամ

2.2 պարիսպ՝ 0.60 քմ x 6000 x 0,0631 =250 ՀՀ դրամ

3. Ընդամենը 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 20
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 0563-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0013-0004 ԵՎ 05-055-0091-0134 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Դերենիկ Հարությունյանի դիմումը որոշում եմ.

1.Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 7-րդ փողոցի, 3-րդ նրբանցքի 05-055-0013-0004 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Կարճաղբյուր բնակավայր, 7-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 1 բնակելի տուն հասցե:

2.Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 11-րդ փողոցի, 1-ին փակուղու 05-055-0091-0134 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Կարճաղբյուր բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի 27/3 հողամաս հասցե:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 20
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 0564-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-008-0106-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,09736 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ 05-008-0207-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,07898 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, 26.12.2002 թվականի ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 28 հունիսի 2008 թվականի ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010 թվականի ՀՕ-50-ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.07.2025թ. <<Հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը սահմանելու մասին>> թիվ 1028-ն որոշումը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումը և Վահրամ Գուրգենի Հայրապետյանի դիմումը (ծնված՝ 01.05.1966 թ.), որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագծերը և այն հանգամանքը, որ 05-008-0106-0015 կադաստրային ծածկագրով 0,09736 հա և 05-008-0207-0002 կադաստրային ծածկագրով 0,07898 հա հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի Ա. Սիմոնյան փողոց 1-ին նրբանցքի 05-008-0106-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,09736 հա հողամասին տրամադրել՝ Ակունք բնակավայր, Ա. Սիմոնյան փողոց 1-ին նրբանցք 12 հողամաս հասցե:

2. Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի Ն. Հովհաննիսյան փողոցի 3-րդ նրբանցքի 05-008-0207-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,07898 հա հողամասին տրամադրել՝ Ակունք բնակավայր, Ն. Հովհաննիսյան փողոց 3-րդ նրբանցք, 2 բնակելի տուն հասցե:

3. Վահրամ Գուրգենի Հայրապետյանին (ծնված՝ 01.05.1966 թ.), համասեփականատերեր Հասմիկ Մնացականի Հայրապետյանին (ծնված՝ 22.12.1971թ.) և Սերինե Վահրամի Հայրապետյանին (ծնված՝ 25.03.1992թ.) պատկանող Վարդենիս համայնքի Ակունք բնակավայր, Ն. Հովհաննիսյան փողոց 3-րդ նրբանցք, 2 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 05-008-0207-0002) 1960

թվականին կառուցված հացատուն՝ 28,60 քմ, մառան՝ 17,70 քմ, 1965 թվականին կառուցված բնակելի տուն՝ 86,40քմ, անասնաշենք՝ 62,70 քմ, 1985 թվականին կառուցված խոհանոց՝ 24,50 քմ, ճանաչել օրինական՝ որպես Վահրամ Գուրգենի Հայրապետյանի, Հասմիկ Մնացականի Հայրապետյանի և Սերինե Վահրամի Հայրապետյանի սեփականություն:

4. Սեփականատիրոջ կողմից փաստացի օգտագործվող 05-008-0106-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման 0,09736 հա և 05-008-0207-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,07898 հա հողամասերը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 20

ք. Վարդենիս